

Juppala v. Finland, 2009, application no. 18620/03, Ջուպալան ընդդեմ Ֆինլանդիայի(Մարդու իրավունքների եվրոպական դատարան)

Թեմա : Զրպարտություն

Ենթաթեմա : երեխայի նկատմամբ բռնության կիրառում

Թեսթը : Անհրաժեշտությունը

Սանկցիան : ֆինանսական

Իրավասությունը : Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Ֆինլանդիա

Գործի փաստական հանգամանքները.

Դիմումատու Էլինա Ջուպալան 2000թ. Իր երեքամյա թոռին տանում է բժշկի, իր մեջքին հայտնաբերված կապտուկի համար : Նա մտահոգություն է հայտնում այն մասին, որ կապտուկը հնարավոր է հասցված լինի տղայի հոր կողմից : Նա տեղեկացնում է նաև բժիշկին, որ երեխան հայտնել է, որ իրեն ծեծել են : Բժիշկը գրում է իր զեկույցում, որ կապտուկը համապատասխանում էր հարվածին և որ գրուցելուց հետո տղան կրկնել է, որ նրան հարվածել է իր հայրը : Նույն օրը ավելի ուշ բժիշկը այդ մասին տեղեկացնում է երեխայի պաշտպանության ծառայությանը : 2001թ. Դիմումատուի դեմ քրեական գործ հարուցվեց այն հիմքով, որ նա տեղեկություններ է հայտնել բժիշկին, ըստ որոնց ենթադրվում էր, որ Տ.-ն ոտնձգություն է կատարել իր որդու նկատմամբ և որ դիմումատուն չուներ որևէ ողջամիտ պատճառ իր պնդումը հիմնավորելու համար : Շրջանային դատարանը մերժել է դիմումատուի դեմ ուղղված մեղադրանքները, գտնելով, որ պարզ չէր, թե արդյոք դիմումատուն եզրահանգել էր, որ երեխային հարվածել է նրա հայրը թե արդյոք բժիշկի զեկույցով պարզապես արձանագրվել էր նրա սեփական տպավորությունը դիմումատուի և նրա թոռան հետ զրույցից հետո : Այնուամենայնիվ, այս վճիռը այնուհետև վերադաս դատարանի կողմից բեկանվել է և դիմումատուն մեղավոր է ճանաչվել զրպարտության կատարման մեջ : Նա պարտավորեցվել է վճարել բարոյական վնասին և դատական ծախսերի փոխհատուցում : Վերաքննիչ դատարանը մասնավորապես գտավ, որ դիմումատուն քննարկել է կապտուկի հարցը մի երեխայի հետ, որն այն ժամանակ ընդամենը երեք տարեկան էր և այն որ վերջինս հայտնել է բժիշկին, որ իրեն հարվածել է իր հայրը, չի հանդիսացել բավարար ողջամիտ պատճառ երեխայի հոր կողմից ոտնձգության կատարման վերաբերյալ պնդման համար : Դիմումատուն չի բերել նաև որևէ այլ պատճառ, որի վրա հիմնել է իր նման հայտարարությունը : Վճռաբեկ դատարանը չի ընդունել բողոքը վերաքննիչ դատարանի որոշման դեմ :

ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը.

Սույն գործով քննարկման են ենթակա երկու մրցակցող շահեր, որոնցից յուրաքանչյուրն ունի մեծ սոցիալական կարևորություն. Երեխաներին իրենց սեփական ծնողների կողմից ոտնձգություններից պաշտպանելու անհրաժեշտությունը և ծնողներին պաշտպանելու կարիքը ոչ անհրաժեշտ միջամտությունից նրանց մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի նկատմամբ, և անարդար ձերբակալման և հետապնդման ռիսկը: Առաջինը ներառում է երեխաների պաշտպանությունը, որպես հանցագործության զոհերի: Երեխայի նկատմամբ ոտնձգությունը քրեական այնպիսի արարք է, որի դեմ դժվար է պայքարել, քանի որ դրա գոյությունը դժվար է բացահայտել: Փոքր երեխաները ունակ չեն հայտնելու այդ մասին, իսկ ավելի մեծ երեխաները հաճախ վախենում են: Դատարանը գտավ, որ էական հարցը, որը պետք է քննարկվեր այն էր, թե ինչպես պատշաճ հավասարակշռություն հաստատել այն դեպքում, երբ ծնողը սխալ կերպով կասկածվում է իր երեխայի նկատմամբ ոտնձգելու մեջ, միաժամանակ հաշվի առնելով այն դժվարությունները, որոնք ծագում են նման դեպքերը բացահայտելու ընթացքում ռիսկի տակ գտնվող երեխաներին պաշտպանելու համար: Այս հարցերը քննարկելիս առաջնայինն այն է, որ դիմումատուն պատշաճ կերպով է գործել համարելով, որ տղայի մեջքի կապտուկը դիտավորյալ է հասցվել իրեն: Կասկած ունենալով այդ մասին, նա խորհրդակցել է բժիշկի հետ, որը ճիշտ է եղել, երբ որոշել է երեխայի ապահովության ծառայություններին տեղեկացնել այն կասկածի մասին, որը նա ինքն է ձևավորել տղային գննելուց և զրուցելուց հետո: Երեխայի նկատմամբ բռնության լրջությունը, որպես սոցիալական խնդրի, պահանջում է, որ այն անձինք, որոնք գործում են բարեխղճությամբ երեխայի լավագույն շահերից ելնելով, չպետք է դատի տրվելու կամ հետապնդվելու վախ ունենան, երբ նրանք որոշում են, թե արդյոք իրենց կասկածները պետք է հաղորդվեն առողջապահության կամ սոցիալական ծառայություններին:

Կողմերը համաձայնեցին, որ դիմումատուի դատապարտմամբ միջամտություն է ցուցաբերվել նրա արտահայտվելու ազատության իրավունքին, որը հետապնդում էր իրավաչափ նպատակ, այն է՝ այլոց հեղինակության և իրավունքների պաշտպանությունը: Դատարանը ընդունեց, որ դիմումատուի դատապարտումը ‘սահմանված էր օրենքով’:

Մասնավորապես, ՄԻԵԴ-ը մտահոգիչ համարեց վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ թեև կասկաշ չկար այն բանում, որ դիմումատուն տեսել էր իր թոռնիկի մեջքին եղած կապտուկը, նա իրավունք չուներ կրկնելու այն, ինչ թոռնիկն իրեն ասել էր, այն որ նրան հարվածել էր իր հայրը, մի պնդում, որը նա իրոք կրկնել է բժիշկի հետ զրույցի ընթացքում: Ավելին, երեխայի նկատմամբ ոտնձգության կասկածի բարձրաձայնումը, որը ձևավորվել է բարեխղճությամբ, պատշաճ զեկուցման ընթացակարգի համատեքստում, պետք է հասու լինի ցանկացած անձի, առանց քրեական պատասխանատվության ենթարկվելու կամ փոխհատուցում վճարելու պարտավորության վախի:

Ոչ ներպետական դատարաններում և ոչ էլ Եվրոպական դատարանում չէր բարձրացվել այն հարցը, թե դիմումատուն գործել է անպատասխանատու կերպով, այսինքն առանց մտածելու, թե իր թոռան հայտարարությունը հիմնավորված էր թե ոչ: Ընդհակառակը, նույնիսկ առողջապահության պատասխանատու անձը արել է իր սեփական

հետևությունը և գտել է, որ այդ գործը պետք է զեկուցվի երեխայի պաշտպանության ծառայությանը :

Հետևաբար, միայն բացառիկ դեպքերում է, որ արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումը այս բնագավառում կարող է համարվել ահրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում : Դատարանը եզրակացրեց, որ դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի միջամտության համար բավարար պատճառներ չեն ներկայացվել և միջամտությունը չի համապատասխանել ճնշող սոցիալական կարիքի պահանջին:

Տեղի է ունեցել 10-րդ հոդվածի խախտում: